ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 343 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող լրացուցիչ նյութերի ուսումնասիրման անհրաժեշտությունից ելնելով, մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում նախատեսված հիմքերով վիճարկվող նորմի օրենսդրական փոփոխության ընթացակարգերն ու հիմնավորումները լրացուցիչ վերլուծելու նպատակով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածի հիմքով վերսկսել գործի վարույթը։
2. Վերսկսված գործի դատաքննությունը հետաձգել մինչև 2009թ. դեկտեմբերի 1-ը, ժամը 14.00՝ պահանջելով պատասխանող կողմից հնգօրյա ժամկետում սահմանադրական դատարանին տրամադրել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 16.12.2005թ. ՀՕ-33-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխության հիմնավորումները, ինչպես նաև հարցն Ազգային ժողովում քննարկելու և փոփոխություններն ընդունելու նիստի սղագրության և տեսագրության պատճենները։
3. Հաշվի առնելով կողմերի կարծիքները, վերսկսված գործի դատաքննությունը շարունակել բանավոր ընթացակարգով՝ հնարավորություն ընձեռելով կողմերին վերսկսված դատաքննության շրջանակներում հանդես գալու նաև եզրափակիչ ելույթներով։ Այդ առնչությամբ ուժը կորցրած ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հունիսի 30-ի ՍԴԱՈ-58 աշխատակարգային որոշման 4-րդ կետը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10 նոյեմբերի 2009 թվականի
ՍԴԱՈ-98